

ՄԱԿԴԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լ. Հ.

Հովհաննես Թումանյանը անկրկնելի, վիթխարի գեղարվեստական երևույթ է և, ինչպես Վ. Տերյանն է բնորոշել, կմնա որպես «մի ունիկում» մեր գրականության պատմության մեջ: Նա մեծ է բոլոր առումներով և առաջին հերթին՝ իբրև գեղագետ: Նրա խոսքի գեղագիտությունը հիացնում է նաև այսօր, նրա չափածոյի ու արձակի պատկերավորության համակարգը ճշմարիտ արվեստի չափանիշ է, և նոր գրական կյանքի իրողությունները գնահատելիս անպայմանորեն պիտի հիմք ընդունենք թումանյանական արվեստի դասերը:

Հանճարեղ լոռեցու գրական ժառանգության մեջ նշանակալի տեղ ունեն պոեմները, որոնք, ի թիվս այլ արժանիքների, ընթերցողին գերում են պատկերավորության համակարգով: Հանրահայտ է, որ Թումանյանի խոսքը պարզ է, մատչելի բոլորին՝ մտավորական թե՛ գեղջուկ, պարզ է նաև նրա արվեստը՝ գերծ շինծու հնարքներից ու ցածրաճաշակ քաղցր-մեղցր արտահայտություններից: Իրավացի է Ստ. Զորյանը. «Հեշտ է գրել, և գրում են շատերը, գեղեցիկ բա-ռերով վերամբարձ տողեր, խորիմաստ երևալու համար՝ ռեբուսա-յին ֆրագներ, կամենալով զարմացնել սկսար ճաշակի մարդկանց ... Բայց դա բնավ չի գոհացնում և չի կարող գոհացնել ... Ժողովուրդը չի ըմբռնում ոչինչ, և դա չի հուզում նրան ... Սակայն գրել սովորական բառերով, գրել պարզ և ... հուզել – դա հատուկ է սակավ ընտրյալների, ինչպես Պուշկինն է, Հայնեն, Լերմոնտովը, Լև Տոլստոյը, Մոպսսանը, Չեխովը, Եսենինը:

Այս սակավներից է Թումանյանը՝ վսեմ պարզության վարպետը»¹:

Այս «վսեմ պարզությամբ» է առանձնանում նաև թումանյանական մակդիրը՝ գրողի պոեմների պատկերավորման համակարգի ամենահաճախական բաղադրիչը:

Թումանյանական մակդիրը բնութագրվում է նաև ժողովրդական լեզվամտածողությանը հոգեհարազատությամբ, անմիջականությամբ՝ գերծ ամեն տեսակ շինծու երանգներից, կեղծ քաղցրախոսությունից, մակդիրների անհարկի ու անտեղի կուտակումներից: Ահա, օրինակ, մի հատված «Հառաչանք» պոեմից, որը գրեթե ասացվածքի է վերածվել.

Մեր ապրուստն ի՞նչ է.- մի կտոր չոր հաց,
Էն էլ հրեն հա՛ - երկնքից կախված՝:

¹ Զորյան Ստ., Հ. Թումանյան (Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1967, էջ 18-19):

² Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1969, էջ 66 (այսուհետև՝ սույն հատորից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից):

Ամեն ինչ այնքան պարզ է ու հասկանալի. ուղղակի խտացած ժողովրդական լեզվամտածողության եզակի օրինակ է, որ մեկնաբանության կարիք չունի: Նույն պոեմից մեկ այլ օրինակ.

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով

Մի քանի կոճղեր դրեց կրակին (էջ 65):

Կրկին ընդգծված մեկ մակդիրը խոսում է ծերունու դժվարին կյանքի, տառապանքների, լուռ ցավերի ու հոգսերի մասին:

Վաղուց է նկատվել, որ մակդրի ոճական արժևորման հարցում անչափ կարևոր է հեղինակային վերաբերմունքը. «Մակդիրը ... ունի լրացուցիչ արտահայտչական, հուզական երանգ՝ բնութագրող է, գնահատող և ոչ անվանող սովորական բառ, անպայման արտահայտում է հեղինակային վերաբերմունք, հաճախ անսպասելի, փոխաբերական, որ ուրիշների համար աննկատ է, կապվում է նկարագրվող միջավայրի, տրամադրության, հերոսի հոգեբանության, արարքների հետ»³: «Հառաչանք» պոեմում կարդում ենք.

Քեզ մոտ եմ գալիս, իմ հին տրտմություն,

Վեհափառ դայակ մանուկ օրերիս (էջ 61):

Հայոց տրտմությունը, թախիծը, վիշտը հին են, դարերի պատմություն ունեն, «հայոց վիշտը անհուն մի ծով» է: Անգամ ուրախության պահին հայր թախծում է, նրա աչքերում մշտապես առկա են տրտմության ու տառապանքի երանգները: Հիշենք, որ երբ հանճարեղ լոռեցին ու Վ. Տերյանը պատահմամբ մի գյուղում ներկա են լինում տոնախմբության, Տերյանը՝ Նաիրի երկրի թախծի ու տխրության երգիչը, նրբորեն նկատում է, թե ինչ թախծոտ ուրախություն է դա: Ուրեմն, անգամ ուրախության ու բերկրանքի պահին առկա է թախիծը, և որքան մեծ խորհուրդ ու անհատական վերաբերմունք ունի հին՝ սովորական թվացող մակդիրը, հանճարեղ բանաստեղծի գնահատությամբ այդ «հին տրտմությունը» սովորական երևույթ չէ, այլ «մանուկ օրերի վեհափառ դայակը»: Այստեղ հատկապես վեհափառ մակդիրը, որը սովորաբար գործածվում է իբրև կաթողիկոսի հոմանիշ և վաղուց սրբացված բառ է, իր գեղարվեստական արժեքով եզակի է ու վառ արտահայտված թումանյանական վերաբերմունք է արտահայտում:

Պոեմից պոեմ մակդիրների ընտրության հարցում փոխվում է հեղինակային վերաբերմունքը, ուստի և փոխվում է մակդիրների բնույթը: Ահա «Լոռեցի Սաքոն». հենց վերնագրում լոռեցի սովորական բառը կարելի է դիտարկել յուրատեսակ մակդիր, որովհետև Սաքոն Լոռու բնաշխարհի, նրա՝ «նոթերը կիտած» ժայռերի, մթին անձավների, չարքերով ու խոլ պատկերներով լեցուն այրերի ծնունդ է, նա ապրում է այդտեղ ու դառնում սնոտիապաշտական հավատալիքների զոհը: Ահա պոեմի սկիզբը.

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց

³ Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Ե., 1986, էջ 136:

Ժայռերը՝ խորունկ նոթերը կհտած՝

Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ

Հայացքով իրար նայում են հանդարտ (էջ 29):

Հենց սկզբից ակնհայտ է հեղինակի վերաբերմունքը նկարագրովոյ երևույթի նկատմամբ. այն իր դրսևորումն է ստանում նաև մակդիրներում: Հեղինակն ընթերցողին պարզորոշ նախապատրաստում է հետագա գործողությունների ընթացքին, և այստեղ որոշակի դեր ունեն մակդիրները: Ձորում գիշերով մենակ մնացած Սաքոյի աչքին բազում պատկերներ են գալիս, նրա ուղեղում դրանք կայծակի արագությամբ խառնվում են իրար, և այս պատկերների հարափոփոխությունը ակնբախ ցուցադրելու համար բանաստեղծը դիմում է ն՝ նախադաս, և՛ հետադաս մակդիրներին կուտակման.

Ու խոլ պատկերներ տգեղ, այլանդակ,

Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,

Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց (էջ 32):

Նկատենք, որ այս հատվածում մակդիրների բառակազմական պատկերը նույնպես միօրինակ չէ, բազմազան է, և դա նույնպես, մեր կարծիքով, իր չափով նպաստում է պատկերի լարվածությանն ու համապատասխան ռիթմի պահպանմանը: Այստեղ կան կազմությամբ և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ բառեր, որոնք յուրատեսակ բազմազանություն են հաղորդում պոեմի տվյալ հատվածին: Օրինակ, խուռներամ և ծանրաշարժ բարդ բառերով արտահայտված մակդիրները նախ փոխարինում են երկարաշունչ նկարագրական բնորոշումներին, սեղմ, խնայողական ձևեր են, չեն զցում պատկերի ռիթմը, ինչպես նաև դիպուկ են արտահայտում նկարագրովոյ պատկերի էությունը: Ահա նմանատիպ ևս մեկ օրինակ.

Անքուն չարքերը չեն միայն քնած,

Վիտում են ուրախ՝ ձորերը բռնած,

Խավարում կազմած դիվական հանդես,

Վազում, վազվզում ստվերների պես (էջ 34):

«Լոռեցի Սաքոն» պոեմում նկատելի է շարադասական մի իրողություն, որը բնորոշ է նաև այլ պոեմների, ուստի կարելի է թումանյանական խոսքի մի նրբագիծ համարել: Բանաստեղծը սիրում է միևնույն մակադրյալին հավելել և՛ նախադաս, և՛ հետադաս մակդիրներ.

Նրանց ոտքերում՝ գազազած գալի՝

Գալարվում է գիծ Դև-Բեղը մոլի (էջ 29):

կամ՝

Փնտրում է ծաղկած ափերը հին-հին (էջ 29):

Շարադասական այս իրողությունը, կարծում ենք, ոճական թեթևություն է հաղորդում խոսքին և խորթ չէ թումանյանական արվեստին:

Հայ ոճագիտության մեջ մակդրի ըմբռնումը քննելիս նշվել է, որ պատկերավորության այս միջոցը գեղարվեստորեն, գեղագիտորեն բնորոշում է ոչ միայն առարկան, այլև գործողությունը⁴: «Լոռեցի Սաքուն» պոեմում կան նաև նման մակդիրներ, ինչպես, օրինակ.

Ու տատի խոսքերն անցյալի հեովից

Ուրվաձայն, երկչոտ հնչեցին նորից (էջ 32):

Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար (էջ 31):

Թումանյանական հանճարի ամենացայտուն դրսևորումներից մեկում՝ «Անուշ» պոեմում, որտեղ զուգակցվում են քնարականն ու էպիկականը, և բանաստեղծը ներբողում է մաքուր, անաղարտ սերը, Թումանյանի խոսքը առավել նրբագեղ է, հուզիչ ու քնարական, ուստի քնքշանում, մեղմանում ու քնարական են դառնում նաև մակդիրները՝ իրենց նպաստը բերելով խոսքի գեղարվեստական դրսևորմանը:

Բազմած լուսնի նուրբ շողերին,

Հովի թևին թռչելով՝

Փերիները սարի գլխին

Հավաքվեցին գիշերով:

- Եկե՛ք, քույրե՛ք, սեզ սարերի

Չքնաղագեղ ոգիներ,

Եկե՛ք, ջահել սիրահարի

Սերը ողբանք վաղամեռ (էջ 73):

⁴ Հայ ոճագիտության մեջ մակդրի հարցում կան տարակարծություններ: Այսպես, պրոֆ. Ա. Մարությանն այն կարծիքին է, որ «մակդիր հասկացությունը, անկախ նրա լայն ու նեղ ըմբռնումից, մեր քերականագիտության մեջ միշտ էլ կապվել է գոյականի հետ և բնութագրվել որպես գոյականի վրա դրվող բառ ... Մակդիրը այսօր էլ դիտվում է որպես առարկան ու երևույթը գեղարվեստորեն բնութագրող բառ կամ բառակապակցություն: Վերջին տարիներին ոճաբանական գրականության մեջ նկատվում է մի նոր միտում՝ մակդիրների շարքը դասել նաև գործողությունը բնութագրող բառերը ... Չնայած որ գործողությունը բնութագրող բառերն իրենց ոճական-արտահայտչական դերով ընդհանուր կողմեր ունեն մակդիրների հետ, դրանք նույնացնելը, մեր կարծիքով, ճիշտ չէ, այդ պատճառով էլ տարիներ առաջ գրված մի հոդվածում առաջարկել ենք նոր եզրային կապակցություն՝ գեղարվեստական մակադրություններ, որի տակ հասկանում ենք՝ ա) մակդիրներ, բ) գործողությունը բնութագրող բառերը» (Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 139-140): Պրոֆ. Ֆ. Խլդաթյանի «Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատուում» գտնում ենք մակդրի այլ բնորոշում: Այստեղ մակդիրը բնութագրվում է որպես «առարկան, երևույթ, գործողությունը արտահայտչորեն բնորոշող բառ կամ բառակապակցություն» (Խլդաթյան Ֆ., Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 68) Մակդրին տրված պրոֆ. Լ. Եզեկյանի ծավալուն բնորոշումը այսպիսին է. «Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը» (Եզեկյան Լ., Ոճագիտություն, Ե., 2003, էջ 334):

Այստեղ կրկին ներկայացված է Լոռու բնաշխարհը, ինչպես «Լոռեցի Սաքոն» պոեմում, բայց որքան տարբեր են այդ նկարագրությունները, որքան տարբեր է հեղինակի վերաբերմունքը հայրենի բնաշխարհի նկատմամբ, ուստի և տարբեր է մակդիրների բնույթը: Մաքուր, անաղարտ սիրո գովերգմանը հարիր են քնքուշ ու մեղմ մակդիրները: Նույն քնարական ու նրբագեղ մակդիրներն են իշխում պոեմի վերջաբանում.

Համբարձման գիշեր, էն դյուծիչ գիշեր,
Կա հրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկնքի դռներ,
Ներքն պապանձվում, լռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհրդով
Լցվում բովանդակ նրա սուրբ գթով:
Էն վեհ վայրկյանին չքնաղ գիշերի՝
Երկնքի անհո ին, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս՝ ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում (էջ 103):

«Անուշը» լեզվական եզակի գեղեցկությունների, բանաստեղծական բացառիկ գյուտերի մի շտեմարան է: Ահա մի ուշագրավ օրինակ.

Դո՛ւրս եկեք կրկին շիրմից, խավարից,
Դո՛ւրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լսեմ,
Կյանքով շնչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
Լցրե՛ք պոետի հաճույքը վսեմ ... (էջ 75):

Իսկապես, «տիեզերքում աստվածային» ճամփորդության ելած բանաստեղծի հաճույքը միմիայն վսեմ կարող է լինել, որովհետև այդ վսեմությանը անհաղորդ է «վար մնացած մարդու հոգին»: Ուստի այս մակդիրը, մեր կարծիքով, բացառիկ է, ներկայացնում է թուևանյանական խոսքի անկրկնելիությունը:

Հայտնի է, որ Թումանյանի խոսքը թեթև է, հեշտամարս, գերծ է ավելորդ պերճանքից, խճողումներից, մատչելի՝ բոլորին: Ոճի՝ այս հատկանիշը դրսևորվում է լեզվի բոլոր բաղադրիչներում, այդ թվում նաև մակդիրների գործածության մեջ.

Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի
Թավուտ ծմակի լռին խորքերից,
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից (էջ 76):

Այս քառատողում գրեթե բոլոր գոյականներն ունեն մակդիրներ, սակայն մակդիրների այդ առատությունից խոսքը չի տուժել, ոճը չի ծանրացել, կրկին նույն թեթև ու դյուրամարս խոսքը, որ հատուկ է ժողովրդական լեզվամտածողությանը:

Դրան նպաստել է այն հանգամանքը, որ հեղինակը յուրաքանչյուր գոյականի հավելել է մեկական մակդիր, չի դիմել մակդիրների կուտակման, և դրա շնորհիվ խոսքը վերստին պարզ է ու մատչելի, գերծ՝ ավելորդ խճողումներից:

«Գեղարվեստական խոսքում բանաստեղծները հաճախ դիմում են, իսկ գրականագետները կարևորություն են տալիս այսպես կոչված գունային մակդիրներին»⁵: Փաստերը վկայում են, որ Թումանյանը այս հարցում ավանդապահ է, գունային մակդիրները շատ հաճախական չեն և հանդես են գալիս իրենց ավանդական ընկալմամբ, ինչպես, օրինակ.

Մոտեցավ սրահին, կախ տվավ սնին

Սև հրացանը՝ սև օձի նման (էջ 96):

- Կարմիր արևից ընկած, Մարո ջա՛ն,

- Կանաչ տերևից ընկած, Մարո ջա՛ն (էջ 97):

«Անուշը» հարուստ է նաև գործողությունը գեղարվեստորեն բնութագրող մակդիրներով: Ահա դրանցից մեկը.

Ամպերը դանդաղ ուղտերի նման՝

Նոր են ջուր խմած ձորից բարձրանում (էջ 91):

«Դեպի անհունը» պոեմում քննվում են կյանքի ու մահվան, անցողիկի ու հավերժի խորհուրդները, թումանյանական խոսքը ձեռք է բերում նոր երանգներ, փոխվում են նաև մակդիրները.

Եվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում,

Երկրում թե այլուր, վերև՝ երկնքում,

Էն անհայտ ճամփով, որով նա գնաց,

Ես էլ կթռչեմ՝ աշխարհքը թողած,

Ու կզգամ նրան, կապրեմ նրա հետ

Որ ուրիշ անվերջ կյանքով երկնավետ ... (էջ 109):

Խոսքին պատկերավորություն ու թարմ շունչ են հաղորդում հականիշներով կառուցված մակդիրները, որոնք հայտնի են օքսիմորոն (նրբաբանություն) անվանումով: Օքսիմորոնը սակավ է հանդիպում, այն բնորոշ է հատկապես մեծերի խոսքին, միշտ թարմ է ու անսովոր, արտառոց, ուստի ոճական տեսակետից խիստ ուշագրավ է: Ահա մի օրինակ «Դեպի անհունը» պոեմից.

Եկավ գիշերը: Իմ հոգնած հոգուն

Իջավ տանջալի մի խաղաղություն (էջ 115):

Այս պոեմի որոշ հատվածներում նկատելի է մակդիրների կուտակում, որը, կարծում ենք, ոճականորեն արդարացված է: Քանի որ այստեղ ծայր են առել խոհերը կյանքի ու

⁵ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ե., 1991,

էջ 47:

մահվան առեղծվածային բազմաշերտ խնդիրների մասին, ուստի և տեղին են բազմաթիվ մակդիրները.

Թովված, կախարդված, տարված էն երգին,
Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին
Դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անհայտ ու հեռու, անձանոթ, օտա՛ր ... (էջ 112):
Արի՛, թռի՛ր, գնանք ինձ հետ,
Անցա՛վ, անհո՛գ, անհո՛ւշ, անհե՛տ ... (էջ 117):

Այս պոեմում մակդիրների կուտակումը երբեմն արտահայտվում է միևնույն մակդիրով.

Ու ժամի ծխոտ կամարների տակ
Կանգնած էր արդեն տխուր պատարագ,
Տխուր պատարագ, տխուր մեղեդիք,
Տխուր աղոթքներ ու տխուր մարդիկ (էջ 111):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հ. Թումանյանի պոեմներում իշխող են նախադաս մակդիրները, հետադասները հաճախական չեն: Ահա դրանցից մեկը.

Մենք հողեղեններս՝ անձար ու չնչին,
Ի՜նչ ենք Աստուծո կամքի առաջին ... (էջ 108):

«Թմկաբերդի առումը» պոեմում իշխող է էպիկականը, և նման բնույթ ունեն մակդիրները: Այս պոեմում ևս նկատելի է շարադասական այն իրողությունը, որ հեղինակը մակադրյալին հավելում է նախադաս և հետադաս մակդիրներ.

Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով հաղթական (էջ 191):
Սպասում է էնտեղ կինը
Ջահել կինը սևաչա (էջ 187):

Այս պոեմում ևս հետադաս մակդիրները քիչ են.

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անհաղթ, աննկուն (էջ 187):

Հեղինակը երբեմն դիմում է ժողովրդախոսակցական, նաև բարբառային բառերով արտահայտված մակդիրներին.

Անցավ զալում էն մեծ արքան
Իրեն փառքով ու գորքով (էջ 196):

Այս պոեմում շատ են երկխոսությունները, որոնցում գործածված կոչականները, բնականաբար, ունեն մակդիրներ.

- Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչա,
- Մի՛թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն ... (էջ 195):

Հետևում է պատասխանը, և նորից աչքի են ընկնում մակդիրները

- Քաջ էր ու սիրուն քեզնից առավել,
- Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա (նույն էջում):

«Թմկաբերդի առումը» պոեմում ևս քիչ չեն գործողությունը բնութագրող դիպուկ մակդիրները.

Հաղթության փառքով ու գինով հարբած
Քնած են բերդի և՛ զորքերն, և՛ տեր,
Ու հավիտյան էլ մնացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր (էջ 194):

Անտարակույս, Թումանյանի կիրառած մակդիրների գեղարվեստական արժեքը պայմանավորված է նրանով, որ դրանք հանդես են գալիս ոչ թե մեկուսի, առանձնացած, այլ հեղինակի պատկերավորման համակարգում՝ որպես դրա անքակտելի բաղադրիչ՝ «խաղաղ գոյակցելով» համեմատության, փոխաբերության, պատկերավորության ու արտահայտչական մյուս միջոցների հետ: Դրա շնորհիվ ստեղծվում է մի անգուգական խոսքարվեստ, գեղարվեստական եզակի համաձուլվածք, որը մեկ անուն ունի՝ թումանյանական:

ЭПИТЕТЫ В ПОЭМАХ ОВАНЕСА ТУМАНЯНА

АЙРАПЕТЯН Л. Г.

Резюме

Поэмы Туманяна представляют особый интерес в плане образности, являющей собой некую системность, в которой особое место занимают эпитеты, характеризующиеся простотой, непосредственностью, свойственной народному мышлению. В каждой поэме эпитеты обретают новые стилистические оттенки, являющиеся выражением своеобразного отношения поэта к этим языковым реалиям. Классификация эпитетов выявляет стилистическое значение каждого эпитета в той или иной поэме, тем самым подчеркивается значение эпитетов в формировании туманяновского стиля.